

**Պոտենցիալ վարկառուի կողմից ներկայացվող
փաստաթղթերի և տվյալների ցանկ
(մինչև 250,000 ԱՄՆ դոլար կամ համարժեք այլ արժույթով վարկերի
դեպքում)**

Խմբագրություն 1

Հ/հ	Անվանումը	Նշումներ
Վարկային հայտի ուսումնասիրման և որոշման կայացման համար անհրաժեշտ փաստաթղթեր		
1.	Վարկի հայտ-դիմում*	
2.	Որպես գրավ առաջարկվող միջոցների (անշարժ և/կամ շարժական գույք, ապրանքանյութական պաշարներ և այլն) սեփականությունը հաստատող փաստաթղթեր (վկայական կամ այլ սեփականությունը հավաստող փաստաթղթեր)	
3.	Գրավի առարկայի գնահատման նախնական հաշվետվություն (ըստ անհրաժեշտության)	
Վարկի տրամադրման վերբերյալ դրական որոշումից հետո վարկի ձևակերպման և պայմանագրի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ		
1.	Հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր՝ այն դեպքում երբ հաճախորդը հաշվետեր չէ	
2.	Իրավաբանական անձի կանոնադրությամբ սահմանված դեպքում և կարգով իրավասու մարմնի (Բաժնետերերի/մասնակիցների/ հիմնդիրների ժողովի և/կամ խորհրդի) որոշումը՝ բանկից վարկի և դրա ապահովման համար առաջարկվող ապահովման միջոցի (գրավ, երաշխավորություն և այլն) վերաբերյալ գործարքներ կնքելու մասին,	
3.	Հարկային պետական ծառայությունից տեղեկանքներ պարտք ու պահանջի վերաբերյալ	
4.	Այլ բանկերում հաշիվների շարժը (նախորդ տարվա և ընթացիկ ժամանակաշրջանի համար)՝ բանկի քաղվածքի տեսքով	
5.	Իրացման / մատակարարման պայմանագրեր, հայտ-պատվերներ, հաշիվ-ապրաքագրեր, վաճառքների կանոնավոր գործընթաց հաստատող այլ փաստաթղթեր	
6.	Կազմակերպության գործունեության հետ կապված պայմանագրեր՝ վարձակալության, բացառիկ ներկայացուցչական և այլն, (առկայության դեպքում)	
7.	Ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատված ձևերի, վերջին հաշվետու ժամանակահատվածի համար՝ հաստատված հարկային տեսչության կողմից <ul style="list-style-type: none"> • վերջին հաշվետու տարվա համար /հաշվեկշիռ և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններ ներկայացնողների համար/ • վերջին հաշվետու եռամսյակի համար հաստատագրված և/կամ պարզեցված հարկ վճարողների համար 	
8.	Տեղեկանք գրանցված բաժնետերերի/մասնակիցների/հիմնադիրների, տնօրենի և կանոնադրության վերջին փոփոխությունների վերաբերյալ <ul style="list-style-type: none"> • ՍՊԸ-ի դեպքում՝ տրված պետ. ռեգիստրի կողմից, • բաժնետիրական և այլ կազմակերպարավական ձևի իրավաբանական անձի դեպքում՝ տրված պետական դեպոզիտարիայի կողմից, իսկ տնօրենի և կանոնադրության վերջին փոփոխությունների վերաբերյալ՝ տրված պետ. ռեգիստրի կողմից 	
9.	Գրավի ձևակերպման համար՝ <ul style="list-style-type: none"> • Անշարժ գույքի դեպքում միասնական տեղեկանք տրված ՀՀ պետական Կադաստրի համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից • Շարժական գույքի դեպքում՝ տեղեկանք տրված ՀՀ պետական Կադաստրի շարժական գույքի հաշվարման ստորաբաժանման կողմից 	
10.	Գրավի առարկայի ծագումն ու դրա նկատմամբ սեփականության, ինչպես նաև այլ իրավունքներ հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում) <ul style="list-style-type: none"> • Անշարժ գույքի դեպքում՝ սեփականության վկայականի մեջ նշված սեփականության իրավունքի հիմքը հավաստող փաստաթղթեր: • Շարժական գույքի սեփականության իրավունքի ծագման հիմքը հավաստող փաստաթղթեր: 	

**Պոտենցիալ վարկառուի կողմից ներկայացվող
փաստաթղթերի և տվյալների ցանկ
(մինչև 250,000 ԱՄՆ դոլար կամ համարժեք այլ արժույթով վարկերի
դեպքում)**

Խմբագրություն 1

	<ul style="list-style-type: none"> • Գրավատուների մասին տվյալներ (եթե միաժամանակ վարկառու չեն)` <ul style="list-style-type: none"> ○ ֆիզիկական անձանց դեպքում` <ul style="list-style-type: none"> ▪ անձնագրերի պատճենները, ▪ Ամուսնացած լինելու դեպքում` ամուսնության վկայական և ամուսնու անձնագիր, վերջինիս մահացած լինելու դեպքում` ամուսնու մահվան վկայական, ▪ Ամուսնացած չլինելու դեպքում` <ul style="list-style-type: none"> • տեղեկանք` ՔԿԱԳԳ-ի արխիվից կամ համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից ամուսնության բացակայության մասին, կամ հայտարարություն վավերացված նոտարի կողմից ամուսնության բացակայության մասին • ամուսնալուծված լինելու դեպքում` ամուսնալուծության վկայական ○ իրավաբանական անձ հանդիսացող գրավատուի` կանոնադրությունը, ռեգիստրի վկայականը, տնօրենի անձնագրի պատճենը, ինչպես նաև սույն բաժնի 2-րդ և 8-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը: 	
11.	Գրավի առարկայի գնահատման հաշվետվություն (ըստ անհրաժեշտության)	
12.	Գրավի առարկայի ապահովագրության վկայագիր/պայմանագիր (ըստ պահանջի)	

* Եթե Վարկի դիմում-հայտում դաշտերը բավարար չեն, տեղեկատվությունը կարող եք ներկայացնել առանձին տեղեկանքներով:

** Առաջնակարգ ապահովման դեպքում ներկայացվում է դիմում և անհրաժեշտության դեպքում իրավասու մարմնի որոշում